Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Վարդանյան

18.12.2023թ.

Հաշվետվություն

2023- 2024 ուս տարի
I կիսամյակի VII դասարանի
անգլերեն լեզվի առարկայի
Թեմա՝ “Wonders of the world nature”

Ուսուցիչներ՝ Կ. Գրիշկյան

Լ. Բալյան

Հաշվետվություն

2023-24ուս տարի I կիսամյակ VII դասարան

Անգլերեն առարկա

Թեմա՝ "Wonders of the world nature"

VII դասարանի կողմից 6 սովորողների կողմից ընտրված և մեթոդական մասնախմբի կողմից հաստատված ուսումնական նախագիծը իրականացվել է 2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ նրանց մասնակցությամբ: Ուսումնական նախագծի թեման էր "Wonders of the world nature".

Ուսումնական նախագծի նպատակն էր ձևավորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք երկիր մոլորակի նկատմաբ, բացահայտել աշխարհի բնության հրաշալիքները, զարգացնել բանավոր խոսքը, մեդիագիտությունը՝ այն է տեղեկատվության սկզբաղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ նյութն ընտրելու կարողությունները:

Նպատակներից մեկն էր նաև, որ աշակերտները կարողանային հստակ ձևակերպել սեփական կարծիքը, լուծեին տեղեկատվության փոխանակման, հաղորդակցական խնդիրները, հիմնավորումներ անեին:

Հիմնախնդիրներից մեկն էր նպաստել աշակերտների աշխարհաճանաչողության ընկալմանը:

Նախագծային աշխատանքը իրականացնելուց առաջ սովորողներին հանձնարարվել էր առաջադրանքներ:

Նախագիծը վերաբերվել է աշխարհի բնության հրաշալիքների ուսումնաս-սիրմանը: Ուսուցիչների աջակցությամբ աշակերտները հավաքել են տեղե-

կատվական սահիկաշար: Կատարել են արդեն պլանավորված աշխատանք-

ներ:

Յուրաքանչյուր աշակերտ ունեցավ իր համապատասխան առաջադրանքը, համացանցից և հանրագիտարաններից դուրս են գրել տեղեկություններ, կատարել նկարահանումներ, ստեղծել սահիկաշար :

Միջառարկայական կապ է ստեղծվել աշխարհագրություն առարկայի հետ և ուսուցչուհի Ա. Ղարախանյանը նույնպես ունեցավ իր ներդրումը:

Ուսումնական նախագծի ընթացքում սովորողները բացահայտեցին աշխարհի բնության հրաշալիքները, ձևավորեցին պատասխանատու վարքագիծ և հոգատար վերաբերմունք երկիր մոլորակի նկատմամբ:

Աշակերտները լինելով ժամանակակից բնության թանգարանում, խորացրեցին իրենց գիտելիքները բնության վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացնելիս աշակերտները բացահայտեցին, գտան այն հարցերի պատասխանները, թե "Which are the wonders of the world nature?", "Where are they situated?".

Ուսումնական նախագծի ընթացքում սովորողները զարգացրեցին սովորել սովորելու կարողություն, լեզվական գրագիտություն: Սույն թվականին կազմել և տնօրինության հաստատմանն եմ հանձնել

Վերջնարդյունքում ձևավորելով համագործակցային հմտություն՝ պատրաստեցին տեսանյութ, սահիկաշար: Նրանց մոտ նկատվում էր հետաքրքրություն և ոգևորվածություն, զարգացավ բանավոր խոսքը: Վերջում յուրաքանչյուր սովորող յուրովի ներկայացրեց իր աշխատանքը: Կատարվեց գնահատում 20 միավորանոց համակարգով՝

Ուսումնական նախագծի գնահատում

Անուն, ազգանուն	միավորներ	գնահատականներ
Աբրահամյան Շուշանիկ	18	9
Աբրահամյան Գագիկ	18	9
Արթենյան Ավետ	17	8
Ներսիսյան Լուիզա	17	8
Պողոսյան Սերյոժա	18	9
Սերոբյան Սուսաննա	19	9

Վերջնարդյունքին հասնելու համար սովորողները կարողացան ցուցաբերել մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում: Կարևորեցին իրենց՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և սովորեցին ցուցաբերել պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում: Ճանաչեցին և արժևորեցին նաև իրենց ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ:

Այսպիսով՝ սույն հաշվետվությամբ նկարագրում ենք աշակերտների կողմից ձեռք բերված այն կարողություններն ու հմտությունները, որոնք վեր են լուծվել անդրադարձի փուլում: Նախագծային աշխատանքն օժանդակել է թեմայի համակարգված յուրացմանը, զարգացրել է երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտություններին և հիշողությանը: Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստել են սովորողների կարծիք հայտնելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու և արժևորելու այլ կարողությունների ձևավորմանը, հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և պատասխանատու վերաբերմունքը դրանց պահպանման գործում:

Ուսումնառության գործընթացում սովորողների մոտ վերոնշյալ կարողունակությունները ձևավորվել ու զարգացել են ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում:

Ուսուցիչներ՝ Կ. Գրիշկյան

Լ. Բալյան